ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՇԱՀԱՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ՝ ԻՄԱՍՏԱՍԷՐ ՈՒՍՈՒՑԻՉԸ

«Աշխարհի մէջ շատ քիչ իրական մտածողներ կան,
եւ անոնցմէ մէկը Շահանն է»[1]։
Յ. Օշական

Սոյն յօդուածը նուիրուած է անցած դարի հայ փիլիսոփայ Շահան Պէրպէրեանին, ով 20-րդ դարում յայտնի արեւմտահայ այն մտաւորականներից էր, ովքեր Օսմանեան Թուրքիայում պայքարում էին հայկական ինքնութեան, հայ մտքի պահպանման ու զարգացման, հայեցի կրթութեան ապահովման համար։ Գիտակցական ողջ կեանքը Պէրպէրեանը նուիրաբերեց գիտամանկավարժական գործունէութեանը՝ իր ուրոյն տեղը զբաղեցնելով հայ փիլիսոփայական մտքի, գեղագիտութեան, երաժշտագիտութեան, պարագիտութեան, մանկավարժութեան ոլորտներում։

Սոյն յօդուածով փորձել ենք նաեւ մեր յարգանքի տուրքը մատուցել հայ անուանի մտաւորական Շահան Պէրպէրեանի պայծառ յիշատակին՝ այնպիսի մտաւորականի, ով իր հոգում կրում էր թէ՛ համաշխարհային, թէ՛ ազգային, հոգեւոր եւ մշակութային հզօր արժէքներ, որոնք մեծ սիրով փոխանցել է յետագայ սերունդներին՝ իր մնայուն հետքը թողնելով հայ մտքի մեծ երախտաւորների կողքին։

Հայ փիլիսոփայ, հոգեբան, գեղագէտ, երաժիշտ, պարագէտ եւ մանկավարժ Շահան Պէրպէրեանը ծնուել է 1891 թուականի Յունուարի 1-ին, Կ. Պոլսի Սկիւտար թաղամասում՝ անուանի ուսուցչապետ, հանրածանօթ Ռեթէոս Պէրպէրեանի (1848-1907) եւ Զարուհի Փանոսեանի ընտանիքում[2], զաւակներից չորրորդն էր։ Տանը՝ հայրական խընամքի ներքոյ, հայեցի դաստիարակութիւն եւ կրթութիւն ստանալուց յետոյ, Շահանը յետագայում ուսումը շարունակում է Եւրոպայում։

1908 թուականին Շահանը մեկնում է Փարիզ եւ մասնակցում Coolege de France*-ի եւ Սորբոնի համալսարանի իմաստասիրութեան եւ արուեստների դասընթացներին, որոնց ընթացքում ունկնդրում է իմաստասիրական մտքի այնպիսի ականաւոր դէմքերի, ինչպիսիք են 19-րդ դարի ֆրանսիացի փիլիսոփայ, նոբելեան մրցանակակիր Անրի Բերգսոնը, սոցիոլոգ Էմիլ Տիւրքէյմը, հոգեբան Ժանէն, Տիւման եւ ուրիշներ։ Նրանցից Շահան Պէրպէրեանի վրայ նկատելի է լինում յատկապէս Բերգսոնի փիլիսոփայութեան ազդեցութիւնը[3]։ Ինչպէս վկայում է Շահանի քոյր Մանիկ Պէրպէրեանը, Եւրոպայում ուսանելու ժամանակ հոգեբանութեան դասախօս Տիւման, պատուհանից տեսնելով բակում գրքերով լի մեծ պայուսակն ուսին քայլող Շահանին՝ իր մօտ գտնուող մարդկանց ասել է՝* «Voila un qui est quelqu'un» - *«Ահաւասիկ մէկը՝ որ մէկն է»[4]։ Շատ*

---

[1] Տե՛ս **Ա. Տէր Խաչատուրեան**, Շահան Ռ. Պէրպէրեան (1891-1956), Կենսագրութիւն եւ մատենագիտութիւն, Պէյրութ, 1969, էջ 5։

[2] Տե՛ս **Ա. Տէր Խաչատուրեան**, նշ. աշխ., էջ 12։

[3] **Ս. Զաքարեան**, Փիլիսոփայութեան Պատմութիւն, Երեւան, 2005, էջ 357։

[4] **Մ. Պէրպէրեան**, Փիլիսոփայ եղբայրս՝ Շահան Պէրպէրեան, «Յորելեանական ճաշկերոյթ եւ հանդիսութիւն

չանցած՝ «Ուշադրութեան» մասին Պէրպէրեանի գրած աշխատանքը Տիման այնքան է հաւանում, որ դասախօսութիւնների ժամանակ ունկնդիրներին ներկայացնում է նրա կատարած մի շարք հարցարդրումները։ Իսկ ուսումնական տարեշրջանի վերջում, երբ նա պաշտպանում է «Ուշադրութեան ճիգը եւ մկանային ճիգը վաղահաս խելագարների մօտ» վերտառութեամբ աւարտաճառը, արժանանում է փիլիսոփայական գիտութիւնների վկայականի։ Շարունակելով գիտական պրպտումները հոգեբանութեան ասպարէզում՝ Շահանը տօքտորական ատենախօսութեան նիւթ է ընտրում «Ախտաբանական մեթոտը հոգեբանութեան մէջ» թեման, որը, ցաւօք, հնարաւորութիւն չի ունենում աւարտելու, քանի որ 1911 թուականի աշնանը ստիպված է լինում վերադառնալ Կ. Պոլիս։ Իսկ մինչ վերադարձը մասնակցում է Բոլոնիայում կայացած իմաստասիրական չորրորդ միջազգային համաժողովին, ինչին առանձին յօդուած է նուիրել՝ կատարելով հետաքրքրական դիտողութիւններ[5]։

Թէեւ կարճ է տեւել Պէրպէրեանի ուսումը Եւրոպայում, սակայն այն մեծ դեր է խաղացել նրա իմաստասիրական, գեղագիտական, հոգեբանական գաղափարների ձեւաւորման մէջ։ Այստեղ են ձեւաւորուել նաեւ նրա երաժշտագիտական գաղափարները, քանի որ նա բախտ է ունեցել հանդիպելու Կոմիտասին, եւ մեծ երգահանից կրած ազդեցութիւնն էլ աւելի է ոգեւորել ու քաջալերել նրան։

Հարկ է նշել, որ Պէրպէրեանն իր մանկավարժական գործունէութիւնը սկսել է մինչ Եւրոպա ուսանելու մեկնելը՝ դեռեւս 17 տարեկանը չբոլորած։ Հօր՝ Ռեթէոս Պէրպէրեանի մահից մի քանի շաբաթ անց, ստանձնել է «Պէրպէրեան» վարժարանի[6] իմաստասիրութեան դասախօսի պաշտօնը։

Վերադառնալով Եւրոպայից՝ Պէրպէրեանը 1911-1914 թուականներին շարունակում է իր մանկավարժական գործունէութիւնը եւ միաժամանակ վարում «Պէրպէրեան» վարժարանի տնօրէնի պաշտօնը։ Նրա կեանքին ու գործունէութեանը նուիրուած աշխատութիւններում եւ յօդուածներում յստակ նկատում ենք, որ նա ոչ միայն չի բաւարարուել մասնագիտական շրջանակի խնդիրներով, այլեւ այդ տարիներին աշխատակցել է պոլսահայ մամուլին՝ յատկապես «Ոստան» պարբերաթերթին։

1914-1918 թուականներին, Մեծ եղեռնի հալածանքներից փախչելով՝ Շահանն ապաստան է գտնում Կ. Պոլսի տներից մէկում[7]։ Նրա կեանքի ու գործունէութեան այդ տարիների վերաբերեալ, բացի իր գրած ինքնկենսագրականում փախստական պայմանների ծանր հոգեվիճակի նկարագրութեան հատուածից՝ զգալի տեղեկութիւններ չկան։

1919-1922 թուականների ընթացքում Շահանը թուրքերի կողմից Հայոց ցեղասպանութեան գործադրման արդիւնքում փակուած Պէրպէրեան վարժարանի սաների ուսումը հասցնում է աւարտին, ապա ընտրում է Կ. Պոլսի Հայ Ուսուցչական Միութեան ատենապետ։ Նաեւ այս շրջանում նրա անձնական կեանքում տեղի է ունենում կարեւոր մի իրադարձութիւն. երեսուն տարեկան հասակում ամուսնանում է օրիորդ Թելլի

ի պատիւ Շահան Ռ. Պէրպէրեանի իր կրթական եւ մտաւորական գործունէութեան քառասնամեակին առթիւ», գրքոյկ, Տիթրոյթ, 1949, էջ 12։

[5] Տե՛ս **Շ. Ռ. ՊԷՐՊԷՐԵԱՆ**, Իմաստասիրական չորրորդ միջազգային համաժողովը, «Ոստան», Ա տարի, թիւ 3, 1911, նաեւ «Իմաստասիրական ժաղովածոյ». կազմեց՝ Շահան Վրդ. Սարգիսեան, Անթիլիաս-Լիբանան, 1992, էջ 157-161։

[6] Պէրպէրեան վարժարանը հիմնել է Ռեթէոս Պէրպէրեանը՝ 1876 թուականին տե՛ս https://hy.wikipedia.org/wiki/Ռեթեոս_Պերպերյան (12.07.2023)։

[7] Տե՛ս **Ա. Տէր Խաչատուրեան**, նշ. աշխ., էջ 20։

հետ եւ նրանից ունենում երկու զաւակ՝ Արտաւազդ եւ Պարէտ անուններով։

1922 թուականին Գ. Գաւաֆեանի, Վահան Թէքէեանի, Յակոբ Օշականի եւ Կոստան Զարեանի հետ Շահան Պէրպէրեանը հրատարակում է «Բարձրավանք» գրական-գեղարուեստական հանդէսը, որը, ցաւօք, երկար կեանք չի ունենում՝ Յ. Օշականի եւ Վ. Թէքէեանի մեկնելու պատճառով։ Նոյն տարուայ աշնանը, երբ քեմալականները մուտք են գործում Կ. Պոլիս, Շահանը մեկնում է Գերմանիա եւ շուրջ երկու տարի Դրեզդենի դալկրոզեան հաստատութիւնում ուսումնասիրում է պարարուեստ։

Եւրոպայում ուսանելուց յետոյ, Շահանն այլեւս չի վերադառնում իր ծննդավայր, այլ մեկնում է Եգիպտոս, եւ տեղի Հայ Առաքելական եկեղեցու Եգիպտոսի թեմի առաջնորդ՝ Թորգոմ Արքեպս. Գուշակեանի աջակցութեամբ, Գահիրէում, եղբօր՝ Օննիկ Պէրպէրեանի հետ վերաբացում է հայրական վարժարանը, որը գործում է տասը տարի։ Վարժարանը տալիս էր տարրական եւ միջնակարգ կրթութիւն, այլ առարկաների հետ հիմնովին աւանդում հայերէն, ֆրանսերէն, անգլերէն եւ արաբերէն լեզուներ[8]։ Սակայն, ինչպէս հաստատութեան տարեկան յայտարարութեան մեջ է յիշատակուած, այն չի հետապնդել զուտ «չոր ու ցամաք» կրթութիւն, այլ դարձել է բազմապիսի ազգային ու հոգեւոր պահանջմունքները բաւարարելու հաստատութիւն։ Եգիպտոսում գործող Պէրպէրեան վարժարանի ծրագրից յատկապէս յիշատակելի է «Նաւասարդեան» օրը կամ տօնակատարութիւնը։ Այդ օրը անցկացուել է մարմնամարզական եւ հոգեւոր՝ արտասանութեան, երգի ու պարի եւ ատենախօսութեան մրցումներ։ Ամէն անգամ «Նաւասարդեան օրուայ» տօնակատարութեան ժամանակ, Պէրպէրեանը խրախուսական խօսքով դիմել է իր սաներին՝ դասական իմաստասէր մարդու գաղափարական տեսլականին համապատասխան, առ այն, որ առողջ մարդը նա է, ում ե՛ւ մարմինը, ե՛ւ հոգին է առողջ. «Ամբողջական մարզիկը ան է, որ հաւասար խնամքով մշակած է ու զարգացուցած իր բոլոր ընդունակութիւնները՝ ոգեկան եւ ֆիզիքական։ Ան է ամբողջական մարզիկը, որին բոլոր արտայայտութիւնները, ոգեկան եւ ֆիզիքական, կիրթ են, վայելուչ եւ ուժեղ»[9]։

Նա կողմ է սերունդին ջանասիրութեան ոգով դաստիարակելուն, քանի որ հայերի բարոք կեանքը եւ ազատութիւնը այսպէս կարող է միայն երաշխաւորուել։ Հայ ազգի զօրեղացման համար, ըստ նրա, պէտք է կրթել նոր սերունդներին։

Հայոց Մեծ եղեռնը, գաղթական ու աստանդական կեանքը առաջադրել էին ազգապահպանման համար նոր, աւելի դժուարին խնդիրներ, եւ օտար պետութիւններում հայապահպանութեան ապահովումն էր դարձել աշխարհասփիւռ հայ առաջադէմ գործիչների, այդ թւում եւ Շահան Պէրպէրեանի գլխաւոր մտահոգութիւնը։ Նրա գործունէութիւնը մեծապէս խրախուսւում էր եգիպտահայ գաղութի հոգեւոր առաջնորդի կողմից։

Եգիպտոսի վարժարանում Պէրպէրեանը ծաւալում է բազմապիսի գործունէութիւն՝ բանախօսական, դասախօսական, խմբավարական, ստեղծում է նաեւ երգչախումբ, որն այնպիսի համբաւ է վայելում, որ Եգիպտոսի Երաժշտական միութիւնը խնդրում է մի համերգ տալ՝ հայ երաժշտութեանը մօտիկից ծանօթանալու նպատակով։ Համերգը տեղի է ունենում 1932 թուականի Մայիսի 7-ին, Տիգրան Փաշայի պալատի մէջ[10]։ Ցաւօք, ազգապահպան այս ձեռնարկներն էլ կիսատ են մնում, քանի որ եգիպ-

[8] **Արեւ**, ԺԵ տարի, թիւ 2896 (Ուրբաթ, Օգոստոս 17, 1928), էջ 3։

[9] **Արեւ**, ԺԷ տարի, թիւ 4070 (Եշ., Յունիս 9, 1932), էջ 2։

[10] Տե՛ս **Ա. Տէր Խաչատուրեան**, նշ. աշխ., էջ 37-38։

տահայ գաղութի տնտեսական ծանր իրադրութեան պատճառով Պէրպէրեան վարժարանը, բաւարար հովանաւորութիւն չստանալով՝ 1934 թուականին փակւում է։

Շահան Պէրպէրեանը նոյն թուականին հրաւէր է ստանում Պուխարեստից՝ ստանձնելու տեղի Հայոց ազգային վարժարանի տնօրէնի պաշտօնը, բայց նա այն զիջում է եղբօրը՝ Օննիկին, իսկ ինքը Թորգոմ Արքեպս. Գուշակեանի հրաւէրով, ով արդէն Երուսաղէմի Հայ Պատրիարքն էր, մեկնում է Երուսաղէմ՝ որպէս Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի ուսուցիչ։ Այստեղ նա աշխատում է եւս տասը տարի, աւանդում տասնեակից աւելի առարկաներ՝ փիլիսոփայութեան պատմութիւն, բնազանցութիւն, հոգեբանութիւն, տրամաբանութիւն, ընկերաբանութիւն, արժէքաբանութիւն, բարոյագիտութիւն, գեղագիտութիւն եւ այլ առարկաներ։

Երուսաղէմում նոյնպէս, բազմահմուտ ուսուցիչը, իր հիմնական աշխատանքին զուգընթաց, ծաւալում է հասարակական-լուսաւորական գործունէութիւն։ Նախ Յակոբ Օշականի հետ հիմնում են Հայ մշակութային միութիւնը, իսկ ինքն անձամբ ստեղծում է յիսուն հոգուց բաղկացած երգչախումբը՝ Հայ Երաժշտական միութիւնը։ Պէրպէրեանի կեանքի Երուսաղէմեան շրջանը, Եգիպտոսի եւ Պոլսի հետ համեմատած, ամենաարգասաւորն է։ Այս տարիներին է նա գրում իր մի շարք գործերը՝ «Հայ Աստուածաշունչը եւ ոսկեդարեան հայ մշակոյթը», «Կոմիտաս Վարդապետ. անձը եւ գործը», «Երկու ժամանակները», «Եօթը տօն՝ եօթը խորհուրդ», «Մարդը» եւ այլն։

Երուսաղէմում տասը տարի պաշտօնավարելուց յետոյ՝ 1944 թուականի տարեվերջին, Շահանը տեղափոխւում է Անթիլիասի դպրեվանք՝ իմաստասիրական առարկաները դասաւանդելու նպատակով։ Ինչպէս միւս կրթօջախներում, այստեղ նոյնպէս, իր անխոնջ աշխատանքով, դասախօսութիւններից զատ, Շահանը Նոր տարուայ տօնական օրերին կազմակերպել է թատերական բեմադրութիւններ, կատարել երաժշտական յօրինումներ եւ գեղարուեստական այլ ներկայացումներ։ Բայց, ի տարբերութիւն Երուսաղէմում եւ Գահիրէում նրա կատարած ուսումնասիրութիւնների՝ Անթիլիասում նրա ուշադրութեան առարկան գլխաւորապէս դառնում է հայ մշակոյթը։ Նա տարւում է հայ ճարտարապետութեան, քանդակագործութեան, երաժշտութեան եւ պարարուեստի հարցերով։ Պէյրութի մէջ այս նիւթերի շուրջ պատրաստում է դասախօսութիւններ, բանախօսում տարբեր առիթներով եւ նոյնիսկ առիթ է ունենում ճամբորդելու այլ երկրներ եւ շատ դէպքերում իր խօսքը ասելու տարբեր ամպիոններից։

Իր յօդուածներում եւ դասախօսութիւններում նա մի կողմից փորձում է հնարաւորինս ընդգծել ազգային եւ համաշխարհային մշակոյթների միջեւ եղած կապերն ու ընդհանրութիւնները, իսկ միւս կողմից՝ բացայայտել արուեստի տուեալ ճիւղին յատուկ ազգային ոճը, բնորոշ գծերն ու առանձնայատկութիւնները։ Այս տեսակէտից նա հետեւում է հայ արուեստի մեծագոյն երախտաւորներ Կոմիտասի, Թ. Թորամանեանի, Գ. Յովսէփեանի օրինակին,- գրում է Զաքարիա Քահանայ Սարիբեկեանը[11]։ Նրանցից Կոմիտասի հետ, ինչպէս արդէն նշել էինք, ծանօթացել է իր ստեղծագործական կեանքի արշալոյսին եւ բախտ է ունեցել՝ լսել նրա կենդանի ձայնը, ապրել «Ցեղին կանչը» եւ կրել նրա ոգին.

«Զինքը /Կոմիտասին/ ճանչցայ 1910-ի միջոցներուն, Բարիզ՝ ուր ուսանող մըն էի հազիւ երիտասարդ... Վարդապետը նուագեց ու երգեց։ Ժամ մը կամ աւելի տուաւ ինքզինքը, ինչպէս գիտէր ընել այդ, բոպէի մը մէջ անգամ, այսինքն ամբողջովին։ Ու պա-

[11] **Զ. Քհնյ Սարիբէկեան**, Շահան Ռ. Պէրպէրեան, Կեանքը Նամակներ, Երուսաղէմ, 2001, էջ 18։

տահեցաւ իմ մէջս, այն գիշեր, մին հոգիի կեանքին էն տարօրինակ երեւոյթներէն, որ յայտնատեսութեան մը լոյսին տակ կատարուած դարձը կը կոչուի։ Հայ երաժշտութիւն մը, երաժշտութեան ամենաբարձր տեսակէն, կը յայտնուէր մէկէն ինծի, հեռաւոր ցեղային ալքերուս մէջ արձագանգներ արթնցնելով։ Նոր - ու այնքան հին - խկութիւն մը՝ որ կը փոխէր երաժշտական էութիւնս, զայն կը շրջէր կարծես։ Վարդապետին արուեստագիտական Անձին մէջէն, մէկէն, դէմ յանդիման կը գտնէի ինքզինքս ամբողջ երաժշտական հայրենաշխարհի մը, որուն հպարտ էի ես ալ հեռաւոր կերպով զաւակը եղած ըլլալուս։ Կը զգայի հիմա, որ ցեղս ունեցեր է «իր երգը», որ արժանի էր հնչելու ուրիշ մեծ ժողովուրդներու բարձրագոյն ստեղծագործութիւններու համանուագին մէջ, դեռ եւս համեստ՝ գործերու գիծերուն արտաքին մեծութեամբը բայց գեղեցկութեան էն հարազատ որակէն շինուած։ - Հայ Երաժշտութեան համար Սողոսի մը պէս մտեր էի այդ բնակարանը, այն իրիկուն. ու Վարդապետը զիս կը ղրկէր ետ, իր առաքեալի էութեամբը ինծի դպած՝ Պօղոս մը ըրած ինձմէ»[12]։

Կոմիտաս Վարդապետը մտնում է Պէրպէրեանի հոգին, դառնում առաքեալ եւ իմաստաւորում ապագայ ուսուցչի կեանքը։ Շահանը նոյնպէս յետագայում փորձում է արուեստի ու մշակոյթի բնագաւառներում բացայայտել հայեցի ոգին, նրա ոճն ու իւրայատկութիւնները, որն այդպէս էլ չի յաջողւում, քանի որ մի կողմից գաղթականի դժուարին կեանքը, միւս կողմից ճակատագրի նոր հարուածը, կազմաքանդ են անում իմաստասէր ուսուցչի կեանքը։

1952 թուականին Փարիզում աւտովթարից մահանում է Շահանի կրտսեր որդին՝ Պարետը։ Դժբախտութիւնը խորապէս ցնցում է Շահանին, պատճառ դառնում ոչ միայն անձնական ու հոգեկան ծանր կացութեան, այլեւ՝ մասնագիտական աշխատանքի խաթարման։ Գրեթէ երկու տարի նա չի կարողանում գնալ Անթիլիաս՝ ուսուցչական գործունէութիւնը շարունակելու։ Ճիշդ է, Պէրպէրեանը մի կերպ կարողանում է յաղթահարել ճակատագրի դառը հարուածը եւ շուտով վերադառնում ու վերսկսում է դասերը, բայց, ցաւօք, դա էլ երկար չի տեւում։

1956 թուականի ամռանը անուանի իմաստասէրը հերթական արձակուրդն ընտանիքի հետ անցկացնելու նպատակով մեկնում է Փարիզ՝ այս անգամ անվերադարձ. Հոկտեմբերին յանկարծամահ է լինում սրտի կաթուածից։

Շահան Պէրպէրեանի թողած գրական ժառանգութիւնը եւ մանկավարժական գործունէութիւնը անկասկած լուսաւոր հետք եւ մեծ ազդեցութիւն է թողել հայ իրականութեան, հայ մտքի եւ արուեստագիտութեան պատմութեան վրայ։ Եւ այն այսօր էլ կարիք ունի համակողմանի ուսումնասիրութեան։

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԵՊՀ Փիլիսոփայութեան պատմութեան եւ տեսութեան ամպիոնի հայցորդ

[12] **Շ. Ռ. Պէրպէրեան**, Կոմիտաս Վարդապետ, Անձը եւ Գործը, Պուրէշ, 1936, էջ 5, 7-8։